

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԼՂՀ ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

#### Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2015 թվականի տասն ամսվա ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 24473.3 մլն դրամ՝ պլանավորված 24350.0 մլն դրամ ցուցանիշը գերակատարելով 0.5 %-ով կամ 123.3 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.4 %-ով կամ ավել 1891.5 մլն դրամով:

Հոկտեմբեր ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2896.1 մլն դրամ՝ պլանավորված 2850.0 մլն դրամ ցուցանիշը գերակատարելով 1.6 %-ով կամ 46.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերակատարվել է 18.2 %-ով կամ ավել 445.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 69 տնտեսավարող սուբյեկտ և լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 56 ստուգում, այդ թվում՝ չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված՝ 17, ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման և պակասորդի հայտնաբերման՝ 4 ստուգում: Ստուգումների արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 172.8 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 99 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 52-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 16-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 8-ական՝ գործունեության չձևավորման և ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և 15 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 30 վարչական գործ՝ 74.5 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 1 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 55.7 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 127 վարչական գործով սահմանվել է 3 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6817 հաշվարկ-հաշվետվություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ընդունվել է 620 գրանցման հայտ և 3096 եկամտային հարկի հաշվարկ:

Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 42 պայմանագրեր:

Հոկտեմբեր ամսում հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 70 վարձու աշխատողի՝ 11 մլն դրամի չափով:

ԼՂՀ կառավարության կողմից հաստատվել է «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Բ» սերիայի դրոշմապիտակները կիրառության մեջ դնելու մասին» որոշումը:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել է «Հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների ընթացքի կասեցման և վերսկսման ընթացակարգը», «Հատուկ հարկային հաշիվների վարման գրանցամատյանի, ամփոփման տեղեկագրի և պատասխանատուների ցանկը», «Տնտեսավարող սուբյեկտների կողմից արտահանվող, ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքանյութական արժեքների հաշվառման քարտերի ձևերը», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Բ» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները», փոփոխություններ կատարվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման և ֆիսկալային հաշվետվությունների դուրս բերման աշխատանքների կանոնակարգման մասին», «Հարկային, այլ պարտադիր վճարների և պետական տուրքի գծով պարտավորությունների մարմանն ուղղվող միջոցառումների համակարգման վերաբերյալ կանոնակարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2010 թվականի սեպտեմբերի 14-ի N 65-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» և «Տնտեսավարող սուբյեկտների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքանյութական արժեքների հաշվառման քարտերի ձևերը սահմանելու մասին» հրամաններում:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հարկային վարչարարության բարեփոխումների խորհրդի կողմից կազմակերպվել է 1 խորհրդակցություն:

Ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար ծառայողական քննություն է նշանակվել 2 աշխատակցի նկատմամբ:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

### **Հասարակայնության հետ կապ**

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնի պաշտոնական կայքէջում հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել 2 հայտարարություն:

Հոկտեմբեր ամսում հանդիպում է կազմակերպվել արտադրության և մեծածախ առևտրի ոլորտներում գործող հարկ վճարողների հետ, համատեղ քննարկվել ոլորտներում առկա խնդիրները:

Հաշվետու ամսում նախարարության մասնագետը մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների ղեկավարների համար կազմակերպված սեմինար-դասընթացներին՝ ներկայացնելով գույքային հարկերի հաշվառմանն ու հավաքագրմանը վերաբերող թեմաները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 459, ելքագրվել՝ 143 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: